

**ԻՐԱՎԱԶՍՓ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻՑ.
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ , ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ *

Երևանի պետական համալսարան

Հոդվածի նպատակն է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների մանրամասն ուսումնասիրման և համակարգված ներկայացման արդյունքում հանցագործության պրովոկացիայի քրեականացման հիմնավոր առաջարկ ներկայացնելը՝ հաշվի առնելով հանցագործության իրավաչափ պրովակացիայի գաղափարը և դրա առանձնահատկությունները:

Դրված նպատակին հասնելու համար հոդվածում վերլուծվել են օպերատիվ-հետախուզական գործունեությամբ ստացված տվյալների իրավաչափության և օրինականության վիճարկման հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացված դիմումների քննության արդյունքներով Դատարանի ձևակերպած չափանիշները, որոնք հնարավորություն են տալիս իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից: Այդ չափանիշների բովանդակության հաշվառմամբ՝ դրանք պայմանականորեն դասակարգվել են որոշակի խմբերի:

Հոդվածում առաջարկվել է այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ համապարփակ քրեականացման ենթարկել հանցագործության պրո-

* **Գագիկ Ղազինյան** – Իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ պրոֆեսոր-էմիրիտուս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Гегик Казинян – Доктор юридических наук, почётный профессор ЕГУ, Академик Национальной академии наук Республики Армения,

Gagik Ghazinian – Doctor of Legal Sciences, Professor Emeritus of YSU, Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia

Էլ. փոստ՝ gghazinyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0001-8541-4672>.

Գևորգ Բարսեղյան – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս

Геворг Барсегян – Аспирант кафедры уголовного права ЕГУ, преподаватель

Gevorg Barseghian – PhD Student at YSU Chair of Criminal law, Lecturer

Էլ. փոստ՝ gevorg.barseghyan@ysu.am, ORCID: <https://orcid.org/0000-0002-5642-7658>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 11.08.2024

Գրախոսվել է՝ 12.09.2024

Հաստատվել է՝ 15.12.2024

© The Author(s) 2024

վոկացիան: Միննույն ժամանակ, արժևորելով իրավաչափ պրովոկացիան՝ առաջարկվել է ամրագրել քրեաիրավական նորմ, որով այն կհամարվի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Բանալի բռնեք – *օպերատիվ-հետախուզական միջոցառում, օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավաչափություն, հանցագործության պրովոկացիա, ոստիկանական ծուղակ, իրավաչափ պրովոկացիա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, քրեական օրենսգիրք*

I. Նախաբան

Իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունը՝ երաշխավորված արդար դատաքննության իրավունքով, առանցքային նշանակություն ունի, քանզի այն իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում անկախ և անաչառ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքն անձի հիմնական անօտարելի իրավունքներից է և, միննույն ժամանակ, այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք: Արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները և պետության կողմից այս իրավունքների պատշաճ երաշխավորումը բազմիցս կարևորվել և կարևորվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ (արդար դատաքննության իրավունք) և 13-րդ (արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք) հոդվածների ենթադրյալ խախտման վերաբերյալ գործեր քննելիս Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է այս իրավունքների առանցքային նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցում և արձանագրել, որ Կոնվենցիային միացած պետությունները պարտավոր են երաշխավորել այս իրավունքների պատշաճ իրականացումը:

Եվրոպական դատարանը նշել է, որ դեպքերի սովորական ընթացքի պայմաններում անկախ և անկողմնակալ դատավորի կողմից իրականացվող դատաքննությունը պետք է համարվի լուրջ և արդյունավետ երաշխիք գործի փաստերի հաստատման և քրեական պատասխանատվության հարցը որոշելիս (McKERR v. the United Kingdom)¹: Եվրոպական դատարանը արձանագրել է, որ թերություններով իրականացված նախնական քննությունը կարող է բացասաբար անդրադառնալ պատասխանատվություններին որոշելու Դատարանի կարողության վրա (Ağdaş v. Turkey)²:

Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ արդար դատական

¹ Sté u Case of McKERR v. the United Kingdom, (application no. 28883/95) decision, 4 May 2001, § 134, <https://hudoc.echr.coe.int/?i=001-59451>

² Sté u Case of Ağdaş v. Turkey, (application no. 34592/97), 27 July 2004, § 102, <https://hudoc.echr.coe.int/?i=001-61941>

քննության յուրաքանչյուր դեպք գնահատելիս Դատարանը դիտարկում է ողջ վարույթը՝ հաշվի առնելով ոչ միայն պաշտպանության կողմի իրավունքները, այլև հանրային համապատասխան շահերը և տուժողների շահերը՝ կապված հանցագործության պատշաճ քրեական հետապնդման հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաների իրավունքները (Habran and Dalem v. Belgium)³:

Քրեական վարույթի ընդհանուր արդարությունը գնահատելիս Դատարանը դիտարկում է վարույթը որպես մեկ ամբողջություն, ներառյալ այն, թե ինչպես են ձեռք բերվել ապացույցները՝ հաշվի առնելով պաշտպանության կողմի իրավունքները, բայց նաև հանրության և տուժողների շահերը քրեական հետապնդման հարցում, իսկ եթե անհրաժեշտ է՝ նաև վկաների իրավունքները (Schatschaschwili v. Germany)⁴:

Դատավարական տարբեր թերացումների հանրագումարային ազդեցությունը կարող է հանգեցնել 6-րդ հոդվածի խախտման անգամ այն դեպքում, երբ յուրաքանչյուր թերացումն առանձին վերցված բավարար չէր լինի, որպեսզի Դատարանն անարդար ճանաչեր ողջ վարույթը (Mirilashvili v. Russia)⁵:

Իբրահիմը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում Եվրոպական դատարանը իրավական դիրքորոշում է արտահատել այն մասին, որ հանրային շահի նկատառումները չեն կարող արդարացնել այնպիսի միջոցառումները, որոնք փաստացի իմաստագուրկ են դարձնում զանգատաբերի պաշտպանության իրավունքները⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի՝ արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտման փաստով բազմաթիվ գործեր քննելիս անդրադարձել է նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափությանը և հանցագործության պրովոկացիային՝ ձևավորելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափությանը ներկայացվող պահանջները: Դատարանը նաև հստակորեն սահմանել է իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործության պրովոկացիայից տարանջատելու չափանիշները:

Սույն հոդվածի նպատակը Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների համակարգված ներկայացման արդյունքում հանցագործության պրովոկացիայի քրեականացման հիմնավոր առաջարկ ներկայացնել է՝ հաշվի առնելով հանցագործության իրավաչափ պրովոկացիայի գաղափարը և առանձնահատկությունները:

³ St u Case of Habran and Dalem v. Belgium (applications nos. 43000/11 and 49380/11), 17 January 2017, § 96, <https://hudoc.echr.coe.int/?i=001-170633>

⁴ St u Case of Schatschaschwili v. Germany (application no. 9154/10), 15 December 2015, §§ 100-101, <https://hudoc.echr.coe.int/?i=001-159566>

⁵ St u Case of Mirilashvili v. Russia, (application no. 6293/04), 11 December 2008, § 165, <https://hudoc.echr.coe.int/?i=001-90099>

⁶ St u Case of Ibrahim and Others v. the United Kingdom (applications nos. 50541/08, 50571/08, 50573/08 and 40351/09), 13 September 2016, § 252, <https://hudoc.echr.coe.int/?i=001-166680>

II. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրավաչափության գնահատումը

Հայաստանի Հանրապետությունում Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների (այսուհետ նաև՝ ՕՀՄ) ցանկը, սակայն համապարփակ կերպով չի բացահայտում դրանց էությունը, բովանդակությունը, անցկացման կարգը, ինչպես նաև ՕՀՄ իրականացնող անձանց թույլատրելի վարքագծի սահմանները:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս արգելվում է հանցագործության պրովոկացիա իրականացնել, և այս համատեքստում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի օպերատիվ-հետախուզական այնպիսի միջոցառումների, ինչպիսիք են վերահսկելի գնումը, օպերատիվ ներդրումը, օպերատիվ փորձարարությունը և կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը: Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք ամենատարածված միջոցառումներն են, որոնց արդյունքում ստացված տվյալների իրավաչափության և օրինականության վիճարկման հարցերով դիմումներ են ներկայացվում Եվրոպական դատարան:

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից հանցագործության պրովոկացիայի օրենսդրական սահմանման բացակայությունը և միջոցառումների անցկացման կարգի, թույլատրելի սահմանների վերաբերյալ իրավակարգավորումների թերի բնույթը խնդրահարույց են, ուստի պահանջվում է իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործության պրովոկացիայից սահմանազատելու նորմատիվ-իրավական չափանիշների ամրագրում:

Օպերատիվ աշխատակիցների գործողությունների վերաբերյալ ներկայացված բողոքների քննության շրջանակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման սանկցիավորման մեխանիզմի բացակայությունը: Դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողության համակարգային չափանիշների/միջոցների կենսագործումը, ինչի արդյունքում կարող է բացահայտվել հանցագործության պրովոկացիան, կարող է դառնալ իրական զսպիչ գործոն օպերատիվ աշխատակիցների կողմից պրովոկացիայի իրականացման հարցում⁷:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների իրավաչափության և օրինականության վիճարկման հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ներկայացված դիմումների քննության արդյունքներով Դատարանը ձևակերպել է չափանիշներ, որոնք

⁷ St. u Case of Veselov and others v. Russia (applications nos. 23200/10, 24009/07 and 556/10), 2 october 2012, § 106. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-113289>

հնարավորություն են տալիս իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները տարանջատելու հանցագործության պրովոկացիայից: Այդ չափանիշների բովանդակության հաշվառմամբ՝ դրանք պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ հետևյալ խմբերի:

1. *Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մոտ անձի վերաբերյալ օբյեկտիվ կասկածի առկայություն:*

Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու հիմքը հանցավոր գործունեության մեջ անձի ներգրավվածության օբյեկտիվ կասկածն է: Տվյալ դեպքում ենթադրվում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները նախքան կոնկրետ անձի առնչությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին որոշում կայացնելը պետք է ունենան օբյեկտիվ տեղեկություններ այն մասին, որ անձը ներգրավված է հանցավոր գործունեության մեջ⁸: Հանցագործության մասին վկայող այդպիսի տվյալներ կարող են լինել, օրինակ, տեղեկությունը այն մասին, որ կասկածվող անձը տեղյակ է արգելված կամ շրջանառությունը սահմանափակված ապրանքների գներից, հնարավորություն ունի շտապ ձեռք բերելու գործարքի կնքման համար անհրաժեշտ մեծ քանակով ապրանք, իր մոտ ունի արգելված կամ շրջանառությունը սահմանափակված ապրանքների նմուշներ⁹, ինչպես նաև անձի՝ գործարքից եկամուտ ստանալու վերաբերյալ փաստերը¹⁰, նրան մեղսագրվող հանցանքի կատարման և հանցագործության հետքերի քողարկման մեխանիզմի առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկացվածությունը¹¹:

Դատարանը նաև արձանագրել է, որ նախկինում անձի դատվածությունը կամ անձի՝ հանցավոր գործունեությանը հակվածությունը (հանցավոր անցյալը) ինքնին չի վկայում այն մասին, որ ներկայում նա իրականացնում է հանցավոր գործունեություն¹²: Այսինքն՝ տեղեկությունը այն մասին, որ անձը հավանաբար կարող է հանցանք կատարել, բավարար չէ. անհրաժեշտ են անձի հանցավոր գործունեության մասին վկայող կոնկրետ փաստեր: Այլ խոսքերով՝ ՕՀՄ իրականացվել չի կարող միայն այն պատճառով, որ անձը նախկինում իրականացրել է հանցավոր գործունեություն:

Եվրոպական դատարանը «ոստիկանական ծուղակի» դեպքերի քննության

⁸ St u Case of Teixeira de Castro v. Portugal, 9 June 1998, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58193>

⁹ St u Case of Shannon v. the United Kingdom (application no. 6563/03), 4 October 2005, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-70364>, Case of Bannikova v. Russia (application no. 18757/06), 4 November 2010, § 42, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-101589>, Case of Scholer v. Germany, (application no. 14212/10), 18 December 2014, § 86 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-148641>

¹⁰ St u Case of Khudobin v. Russia (application no. 59696/00). 26 October 2006. § 134. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-77692>

¹¹ St u Case of Matanović v. Croatia (application no. 2742/12), 04 April 2017, § 142, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-172466>

¹² St u Case of Constantin and Stoian v. Romania, (applications nos. 23782/06 and 46629/06), 29 September 2009, § 55, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-94406>, Case of Bannikova v. Russia, (application no. 18757/06), 4 November 2010, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-101589>

համար կարևորել է ՕՀՄ անցկացման համար հիմք հանդիսացած առաջնային տեղեկության աղբյուրի որոշումը¹³։ Եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը հիմք է տալիս առանձնացնելու առաջնային տեղեկության հետևյալ աղբյուրները՝

- 1) մասնավոր (ֆիզիկական) անձինք,
- 2) հետաքննության սահմանված կարգով սանկցիավորված այլ հատուկ մեթոդները (օպերատիվ-հետախուզական միջոցառումները),
- 3) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների նախաձեռնողական, որոնողական աշխատանքները։

Մասնավոր անձի կողմից հանցավոր գործունեության մասին տեղեկություն ստանալու դեպքում «ոստիկանական ծուղակի» բացահայտման համար կարևոր չափանիշ է քննությամբ հաստատման ենթակա այն հանգամանքը, որ հանցավոր գործունեությունը սկսված է եղել մինչև տեղեկություն ներկայացրած անձի կողմից օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը¹⁴։

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մոտ օբյեկտիվ կասկածի առկայության ստուգման տեսանկյունից կարևոր է մասնավոր (ֆիզիկական) անձանց ներկայացվող այն պահանջը, ըստ որի՝ նրանք չպետք է լինեն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի (ըստ գործի՝ ոստիկանության) աշխատակից կամ դրանց հետ համագործակցող անձ՝ ինֆորմատոր¹⁵։

Եվրոպական դատարանի որոշումներում հիշատակվող առաջնային տեղեկության հաջորդ աղբյուրը հետաքննության սահմանված կարգով սանկցիավորված այլ հատուկ մեթոդներն են (օպերատիվ-հետախուզական միջոցառումները)։ Հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը այս մեթոդներին հատուկ պահանջներ չի ներկայացնում։ Այսպես, Եվրոպական դատարանի կողմից կոնկրետ գործի քննության ընթացքում պարզ էր դարձել, որ թմրանյութերի առքուվաճառքի վերաբերյալ առաջնային տեղեկությունը, ինչի հիման վրա հետազայում իրականացվել էր «վերահսկելի գնում» ՕՀՄ, ստացվել էր անվտանգության մարմինների աշխատակիցների կողմից հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում, որը սահմանված կարգով սանկցիավորված էր եղել դատարանի որոշմամբ։ Եվրոպական դատարանի կարծիքով՝ տվյալ դեպքում վերահսկելի գնումը չի պարունակել «ոստիկանական ծուղակի» հատկանիշներ, քանզի տեխնիկական միջոցառումները հնարավորություն են

¹³ St u Case of Vanyan v. Russia (application No.53203/99). 15 December 2005.

<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71673>

¹⁴ St u Case of Veselov and others v. Russia (applications nos. 23200/10, 24009/07 and 556/10). 2 October 2012, §91. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-113289>

¹⁵ St u Case of Shannon v. the United Kingdom (application no. 6563/03), 4 October 2005,

<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-70364>, Case of Bannikova v. Russia (application no. 18757/06), 4 November 2010, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-101589>

տվել ձեռք բերելու ծանրակշիռ ապացույցներ օպերացիայի օբյեկտի մոտ թմրանյութեր վաճառելու դիտավորության առկայության մասին¹⁶:

Եվրոպական դատարանի որոշումների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել առաջնային տեղեկության այնպիսի աղբյուր, ինչպիսին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների նախաձեռնողական, որոնողական աշխատանքներն են՝ ուղղված, օրինակ, որոշակի տարածքում թմրանյութերի, կեղծ փողերի բացահայտ իրացման կամ ծառայությունների շուկայում համակարգչային ապօրինի ծրագրերի իրացման փաստերի հայտնաբերմանը¹⁷:

Եվրոպական դատարանը կոնկրետ գործի քննության ընթացքում եզրակացրել է, որ վերահսկելի գնումը, որը դրսևորվել էր ոստիկանության աշխատակիցների կողմից սեփական նախաձեռնությամբ համակարգչային ապօրինի ծրագրի պատվերով և համակարգչում դրա հետագա տեղադրմամբ, չի կրել «ոստիկանական ծուղակի» հատկանիշներ: Այսպիսի եզրակացության դատարանը հանգել է այն հանգամանքների հաշվառմամբ, որ այս գործարքը կենցաղային բնույթ է կրել, ծառայություն մատուցողները ինտերնետում բացահայտորեն գովազդել են իրենց ծառայությունները, իսկ ոստիկանության աշխատակիցները դուրս չեն եկել սովորական գնորդի վարքագծից¹⁸:

Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ մեկ այլ գործով օբյեկտիվ կասկածի մասին վկայող հանգամանք է եղել ոստիկանական գործակալների կողմից իրենց պատահականորեն հանդիպած երրորդ անձից հարցումը, որի արդյունքում տեղեկություն են ստացել այն մասին, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ապագա օբյեկտը որոշակի տարածքում զբաղվում է թմրանյութերի առքուվաճառքով: Խոսակցությունից հետո ոստիկանության աշխատակիցները հանդիպման են կանչել օպերատիվ-հետախուզական միջոցառումների ապագա օբյեկտին, որն էլ նրանց թմրանյութ է վաճառել: Այնուհետև ոստիկանության աշխատակիցները ևս երկու օպերատիվ [վերահսկելի] գնում են իրականացրել¹⁹:

Եվրոպական դատարանի որոշումների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել օբյեկտիվ կասկածի այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են տեղեկության պերսոնալիզացիան (անհատականացվածությունը) և ստացված առաջնային ինֆորմացիայի նախնական ստուգման անհրաժեշտությունը՝ այն

¹⁶ Տե՛ս Case of Bannikova v. Russia (application no. 18757/06). 4 November 2010, § 69 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-101589>

¹⁷ Տե՛ս Case of Volkov and Adamskiy v. Russia (applications nos. 7614/09 and 30863/10). 26 March 2015, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152988>, Decision of Mills v. Ireland, (application no. 50468/16), 10 October 2017, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-178562>

¹⁸ Տե՛ս Case of Volkov and Adamskiy v. Russia (applications nos. 7614/09 and 30863/10). 26 March 2015, § 40-45, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152988>

¹⁹ Տե՛ս Decision of Mills v. Ireland (application no. 50468/16), 10 October 2017, § 25. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-178562>

դեպքերում, երբ առաջնային տեղեկության աղբյուրը բացահայտված չէ: Կոնկրետ գործի քննության ընթացքում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ իրավապահ մարմինների արարքներում առկա են «ոստիկանական ծուղակի» հատկանիշներ: Այսպիսի եզրակացության համար հիմք է եղել այն հանգամանքը, որ գործում առաջնային տեղեկության աղբյուրը պետական գաղտնիք է եղել, հետևաբար իշխանությունները օպերացիա սկսելու համար պետք է ունենային ծանրակշիռ հիմնավորումներ: Այս համատեքստում Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ոստիկանությունը ունեցել է մոտ հինգ-վեց ամիս՝ սկզբնական տեղեկության ստուգման և վստահեցնողության հաստատման համար: Սակայն առկա չեն այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն, որ իրականացվել է լրացուցիչ գործողություն, կամ որ այդպիսի գործողության արդյունքները պետական գաղտնիք են, հետևաբար չեն կարող բացահայտվել, ուստի դատարանն արձանագրել է, որ առկա չեն այնպիսի տվյալներ, որոնք կհաստատեն հանցավոր գործունեությանը ստուգվող անձի անմիջական մասնակցության վերաբերյալ առաջնային տեղեկությունը: Գործի հանգամանքներից պարզ է դարձել, որ ոստիկանությունը կոնկրետ անձի կողմից հանցավոր գործունեություն իրականացնելու վերաբերյալ տեղեկություն չի ունեցել, հետևաբար անձի վերաբերյալ կասկածները անհիմն են: Ոստիկանությունը, ըստ էության, կասկածելի հանգամանքներում և կասկածելի վայրում իրականացրել է օպերատիվ-հետախուզական միջոցառում՝ պլանավորելով ձերբակալել որևէ մեկին՝ առանց թիրախավորելու կոնկրետ անձի՝ ֆիզուրանտի²⁰:

2. *Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձանց պասիվությունը:*

Իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործության պրովոկացիայից տարանջատելու հարցում կարևոր է հաստատել, թե դիտարկվող հանցավոր արարքը կկատարվե՞ր արդյոք առանց հանրային իշխանության մարմինների աշխատակիցների միջամտության²¹:

Դատարանը մեծ կարևորություն է տվել այն հանգամանքին, որ հանցավոր գործունեության մասին հաղորդմամբ իշխանություններին դիմելու պահին մասնավոր անձինք իրավապահ մարմինների գործակալներ չեն եղել: Այն դեպքերում, երբ իրավապահ մարմինները կամ նրանց հետ համագործակցող անձինք հանցավոր գործարքի բեմադրման հարցում ունեն առաջատար դեր (օրինակ, երբ ոստիկանական գործակալը կապվում է անձի հետ և խնդրում

²⁰ St' u Case of Nosko and Nefedov v. Russia (applications nos. 5753/09 and 11789/10). 30 October 2014, §68, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-147441>

²¹ St' u Case of Ramanauskas v. Lithuania (application no. 74420/01), 5 February 2008, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-84935>

իրեն թմրանյութ վաճառել), Դատարանը ճանաչում է, որ իշխանությունները չեն սահմանափակվել ընթացքում գտնվող հանցավոր գործունեության հետաքննությամբ, այլ սադրել են անձին հանցանքի կատարմանը²²:

Եվս մեկ կարևոր գործոն, որը Եվրոպական դատարանը ուսումնասիրում է իրավաչափ օպերատիվ-հետախուզական գործունեությունը հանցագործության պրովոկացիայից սահմանազատելու համար, տեղեկությունն է այն մասին, թե արդյոք անձը ենթարկվել է ճնշման հանցանքի կատարմանը ստիպելու նպատակով: Որպես այդպիսի ճնշում կարող է դիտարկվել, օրինակ, ոստիկանական գործակալի կողմից թմրանյութեր գնելու վերաբերյալ կրկնակի առաջարկը այն բանից հետո, երբ անձը հրաժարվել էր գործարքին մասնակցելուց, թմրանյութերի համար դրանց իրական արժեքից բարձր գին առաջարկելը²³ կամ անձի մեջ խղճահարություն առաջացնելը (օրինակ՝ գործակալը հայտնում է այն անձի վատ ինքնագզացողության մասին, որի համար իբրև թե գնվում է թմրանյութը)²⁴:

Քննարկվող հարցի համատեքստում օպերատիվ տեխնիկային վերաբերող հաջորդ հարցը մեկ օպերացիայի շրջանակներում իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման թվաքանակի վերաբերյալ գնահատականն է: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ այնպիսի տեխնիկայի կիրառումը, որը ներառում է անձի հետ բազմաթիվ ապօրինի գործարքների իրականացում, համարվում է հետաքննության ճանաչելի և թույլատրելի մեթոդ միայն այն դեպքում, երբ հանցավոր գործունեությունը ենթադրում է ոչ թե հանցավոր մեկ դեպք, այլ շարունակվող հանցավոր գործունեություն²⁵:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ օպերատիվ այսպիսի հնարքը կարող է ուղղված լինել անձի վստահության նվաճմանը՝ նրա հանցավոր գործունեության մասշտաբները պարզելու համար²⁶ կամ հանցավոր գործունեության ավելի խոշոր աղբյուրի, ավելի կոնկրետ՝ հանցավոր ավելի լայն շրջանակի բացահայտմանը²⁷:

Համապատասխանաբար, երբ պետական մարմինները օգտագործում են օ-

²² St' u Case of Malininas v. Lithuania (application no. 10071/04), 1 July 2008. § 37
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-87223>

²³ St' u Case of Malininas v. Lithuania (application no. 10071/04), 1 July 2008. § 37
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-87223>

²⁴ St' u Case of Vanyan v. Russia (application no. 53203/99), 15 December 2005. § 67.
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71673>

²⁵ St' u Case of Grba v. Croatia (application no. 47074/12), 23 November 2017, §§ 99-101
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-178699>

²⁶ St' u Case of Scholer v. Germany (application no. 14212/10), 18 December 2014, §§ 89-90
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-148641>

²⁷ St' u Case of Furcht v. Germany (application no. 54648/09), 23 October 2014, §§ 58-59
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-147329>

պերատիվ մեթոդ, որը ներառում է կասկածվողի հետ մի քանի ապօրինի գործարքների իրականացում, գաղտնի գործակալի արարքները յուրաքանչյուր դեպքում չպետք է ընդլայնի ոստիկանության դերը՝ գաղտնի գործակալից վերածվելով գործակալ-պրովոկատորի. յուրաքանչյուր գործարքում ոստիկանության վարքագիծը պետք է համապատասխանի պետական իշխանության պատշաճ օգտագործմանը²⁸: Դատարանը նաև արձանագրել է, որ այն դեպքերում, երբ պետական մարմինները օգտագործում են օպերատիվ մեթոդ, որը ներառում է կասկածվողի հետ մի քանի ապօրինի գործարքների իրականացում, հետաքննության յուրաքանչյուր երկարացում պետք է հիմնավորվի ծանրակշիռ այնպիսի ապացույցներով, ինչպիսիք են մեղադրական դատավճիռ կայացնելու համար բավարար ապացույցների ապահովման անհրաժեշտությունը, կասկածվողի հանցավոր գործունեության բնույթի և մասշտաբների առավել խորքային ընկալումը կամ հանցավոր գործունեության ավելի լայն շրջանակի բացահայտումը: Այսպիսի պատճառների բացակայության դեպքում պետական մարմինները կարող են ճանաչվել այնպիսի արարքների մասնակից, որոնք դիտավորյալ ընդլայնում են հանցագործության բնույթը և մասշտաբները²⁹:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ բոլոր այն դեպքերում, երբ կհաստատվի, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձինք որևէ ազդեցություն են ունեցել անձի մոտ հանցանքը կատարելու դիտավորության ձևավորման, հանցավոր վարքագծի ակտիվացման հարցում, որևէ կերպ ուղղորդել են անձին հանցանքը կատարելու կամ դրսևորել են այնպիսի վարքագիծ, առանց որի ազդեցության անձը չէր կատարի հանցանքը, ապա առկա կլինի հանցագործության պրովոկացիա:

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների սանկցիավորման պատշաճ ընթացակարգը:

Այս չափանիշը Դատարանը ձևավորել է «վերահսկելի գնում» և «օպերատիվ փորձարարություն» օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման իրավաչափության և օրինականության վերաբերյալ դիմումներ քննելիս: Դատարանը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ այս միջոցառումների

²⁸ Stéu Case of Miliniené v. Lithuania (application no. 74355/01), 24 June 2008, § 38, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-87142>, Case of L alas v. Lithuania (application no. 13109/04), 1 March 2011, § 45, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-103690>, Case of Scholer v. Germany, (application no. 14212/10), 18 December 2014, §§ 89-90 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-148641>, Case of Ciprian Vlăduț and Ioan Florin Pop v. Romania (application nos. 43490/07 and 44304/07), 16 July 2015, §§ 86-87, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-156066>

²⁹ Stéu Case of Malininas v. Lithuania, (application no. 10071/04), 1 July 2008, § 37, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-87223>, Case of Furcht v. Germany (application no. 54648/09), 23 October 2014, §§ 58-59, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-147329>

սանկցիավորումը պետք է իրականացվի ոչ թե այն մարմնի վարչական որոշմամբ, որը հետագայում իրականացնելու է միջոցառումը, այլ դատարանի կամ դատախազի որոշմամբ³⁰:

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ «վերահսկելի գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման կայացման գործընթացը պետք է համապատասխանի հստակության և կանխատեսելիության պահանջներին, և այդ որոշումները պետք է պարունակեն մանրամասն տեղեկություններ այդ միջոցառումների իրականացման հիմքերի և նպատակների մասին և պետք է ենթական լինել դատական վերահսկողության³¹:

4. *Հանցագործության պրովոկացիայի մասին հայտարարության՝ դատական կարգով ստուգման հնարավորություն՝ մրցակցային դատավարության կանոններին համապատասխան:*

Դատարանի կողմից առանձնացված հաջորդ չափանիշը օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքը և արդյունքները դատական ստուգման ենթարկելու հնարավորությունն է: Ըստ Դատարանի՝ անձի արդար դատաքննության իրավունքը կարող է երաշխավորվել, եթե նա հնարավորություն ունենա քրեական դատավարության ընթացքում բարձրաձայնելու իր նկատմամբ հանցագործության ենթադրյալ պրովոկացիայի իրականացման մասին: Ազգային դատարանը այդ դեպքում պարտավոր է մանրամասնորեն ստուգել քրեական գործի նյութերը, և եթե կհաստատվի, որ իրավապահ մարմինները անձին պրովոկացրել են հանցանքի կատարման, ապա օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված ապացույցները ճանաչել անթույլատրելի³²: Այսպիսի ստուգման ընթացքում դատարանը պետք է ստուգի ՕՀՄ իրականացման հիմքերը, իրավապահ մարմինների ներգրավվածությունը անձի մոտ հանցավոր մտադրության ձևավորման գործընթացում, ինչպես նաև ցանկացած փաստ, որը վկայում է անձի նկատմամբ դրսևորված ճնշման կամ հանցանքի կատարմանը պրովոկացնելու մասին: Ընդ որում, անձի կողմից հանցանքի կատարման փաստի ընդունումը (ըստ գործի՝ թմրանյութերի վաճառքի վերաբերյալ գործարքում մասնակցությունը) չի կարող հանգեցնել դատարանի կողմից հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ հարցի քննությունից մեխանիկորեն հրաժարման³³:

³⁰ Sté u Case of Veselov and others v. Russia (applications nos. 23200/10, 24009/07 and 556/10), 2 october 2012, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-113289>

³¹ Sté u Case of Vanyan v. Russia (application no. 53203/99), 15 December 2005. §§ 46–47 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71673>, Case of Khudobin v. Russia, (application no. 59696/00), 26 October 2006. § 135. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-77692>

³² Sté u Case of Vanyan v. Russia (application no. 53203/99), 15 December 2005. §§ 69–70 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-71673>, Case of Khudobin v. Russia (application no. 59696/00), 26 October 2006. §§ 133–135. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-77692>

³³ Sté u Case of Ramanauskas v. Lithuania (application no. 74420/01), 5 February 2008, §§ 71–72, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-84935>

Քննարկվող հարցի համատեքստում Եվրոպական դատարանը նաև կարևորել է, որ անձի կողմից հանցագործության պրովոկացիայի արդյունքում ստացված ապացույցների՝ գործի նյութերից հեռացման վերաբերյալ միջնորդության քննարկումը պետք է համապատասխանի մրցակցային դատավարության կանոններին և կողմերի հավասարության սկզբունքին: Ասվածը նշանակում է, որ անձը պետք է հանրավորություն ունենա ապացույցներ ներկայացնելու, մեղադրանքի կողմի վկաններին հարցաքննելու, ինչպես նաև նրան պետք է հասանելիություն տրվի բոլոր այն ապացույցներին, որոնց հղում է կատարում մեղադրանքի կողմը³⁴: Դատարանը նաև ընդունել է, որ ապացույցների մի մասի բացահայտումը կարող է անցանկալի լինել՝ պայմանավորված հետաքննության որոշ մեթոդների վերաբերյալ տեղեկությունը գաղտնի պահելու կամ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ, մեղադրյալը, որը պնդում է, թե իր կողմից հանցանքի կատարումը պրովոկացիայի արդյունք է, չպետք է մեղադրանքի կողմի համեմատությամբ դրվի անհավասար վիճակում այն հիմնավորմամբ, որ այդ ապացույցները չեն կարող ներկայացվել պաշտպանության կողմին: Այդ պատճառով Եվրոպական դատարանը նշել է, որ կարող է կիրառվել ընթացակարգ, որի ընթացքում կոնֆիդենցիալ ապացույցները կներկայացվեն դատարանին, որը որոշում կկայացնի, թե արդյոք դրանց ներկայացումը մեղադրյալին կօգնի նրան հիմնավորելու իր դիրքորոշումը պրովոկացիայի առկայության մասին: Այն դեպքում, երբ դատարանը այս հարցով կգա դրական դիրքորոշման, ապա ապացույցները պետք է բացահայտվեն: Այս կանոնը, ըստ Դատարանի, տարածվում է նաև այն ապացույցների վրա, որոնք քրեական գործի նյութերում տեղ չեն գտել³⁵:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը ևս, անդրադառնալով հանցագործության պրովոկացիային, արձանագրել է, որ «... հանցագործության սադրանքն իրենից ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորվելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում»:

³⁴ St' u Case of Shannon v. the United Kingdom (application no. 6563/03), 4 October 2005, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-70364>

³⁵ St' u Case of Bannikova v. Russia (application no. 18757/06), 4 November 2010, §§ 63–64 <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-101589>

III. Հանցագործության պրովոկացիայի քրեականացումը

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների, դրանց արդյունքում ստացված տվյալների իրավաչափության և օրինականության վիճարկման հարցերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ տարբեր ժամանակահատվածներում և որոշումներով ձևավորված դիրքորոշումների, այս հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի մշակած չափանիշների համակարգային և համապարփակ հետազոտման արդյունքում կարծում ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան վավերացրած և/կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին միացած պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը, օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքը և քրեական դատավարության օրենսգիրքը ներդաշնակ և միմյանց փոխլրացնող լրամշակման կարիք ունեն՝ ներպետական իրավակարգավորումները Եվրոպական դատարանի մշակած ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքով «հանցագործության պրովոկացիա» երևույթը սահմանված չէ: Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում լոկ հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորման համար՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար (հոդված 477): Այս երկու հանցանքների՝ կաշառքի և մասնավոր ոլորտում կաշառքի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականությամբ, քանզի քրեաիրավական նորմերը մեծ մասամբ ապահովում են կոնկրետ ոլորտում պետության քաղաքականության իրագործումը: Սակայն որևէ երևույթի քրեաիրավական արգելքը, կարծում ենք, պետք է ներառի տվյալ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները, այլ կերպ լինի հնարավորինս ունիվերսալ և ներառական, հետևաբար օրենսդրի մոտեցումը՝ միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասով, արդարացված չէ և վերափոխման կարիք ունի:

Քրեական օրենսգրքի՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմը (հոդված 477), մեր կարծիքով, պետք է էապես խմբագրվի և պատասխանատվություն նախատեսի առհասարակ հանցագործության պրովոկացիայի համար: Առաջարկվող հանցակազմը պետք է ունենա ներառական բնույթ՝ պատասխանատվություն նախատեսելով ցանկացած տեսակի հանցագործության պրովոկացիայի համար՝ ի տարբերություն ֆրագմենտալ բնույթ ունեցող գործող հանցակազմի:

Սույն աշխատանքի շրջանակներում, չհավակնելով բացահայտելու «հանցագործության պրովոկացիա» երևույթի ողջ քրեաիրավական էությունը, պարզապես նշենք, որ տեսական մակարդակում քննարկյալ առարկա պետք է

դառնան հանցագործության պրովոկացիայի և հանցակցության տարանջատման չափանիշները, ինչպես նաև պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականները:

Վերը շարադրվածի հետ մեկտեղ, կարծում ենք, կարծրատիպային պետք է համարել այն մոտեցումը, ըստ որի՝ հանցագործության պրովոկացիան ունի միայն բացասական բնույթ: Հնարավոր են դեպքեր, երբ օպերատիվ աշխատակիցը անձին սադրի իր դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի համեմատությամբ առավել թեթև հանցանքի կամ վարչական իրավախախտման կամ առհասարակ որևէ տեսակի իրավախախտում չհամարվող արարքի կատարման:

Քրեական իրավունքի գիտությունում, ինչպես արդեն նշել ենք, հանդիպում են նաև այնպիսի դատողություններ, որոնք օպերատիվ ներդրման ընթացքում հանցագործության պրովոկացիան դասում են իրավաչափ արարքների շարքին, երբ դրա կատարումը համարվում է հանցավոր դիտավորության հայտնաբերման, ավելի ծանր հանցանքների կանխման կամ կատարված հանցանքների բացահայտման միակ կամ առավել արդյունավետ միջոցը³⁶: Մեր կարծիքով՝ այս առաջարկների իրագործումը արդարացված չէ առաջին հերթին սոցիալական դիտանկյունից, քանզի նմանատիպ իրավիճակներում իրական հնարավորություն է սեղծվում բազմաթիվ անձանց հանցագործության սադրելու՝ այն արդարացնելով հանցավոր գործունեության բացահայտման միակ կամ առավել արդյունավետ միջոցը լինելու հանգամանքով: Սակայն իրավաչափ պրովոկացիայի արժևորման տեսանկյունից ողջամիտ ենք համարում բացառություն սահմանել: Ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորել է նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարման սադրելով: Շարադրվածը առավել պատկերավոր ներկայացնելու համար քննարկենք հետևյալ օրինակը:

Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցը «օպերատիվ ներդրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում ներդրվել է արգելված զանգվածային հավաք իրականացնող անձանց շրջանում: Հավաքի ժամանակ դրա կազմակերպիչներից մեկը կոչ է անում հավաքվածներին շարժվել կառավարության շենք, ներխուժել այնտեղ և զավթել իշխանությունը: Ներդրված աշխատակիցը ստեղծված իրավիճակում միջոցներ է ձեռնարկում հավաքի ակտիվ խմբին տարհամոզելու ուղղությամբ՝ նրանց ուղղորդելով փողոցի խանութների ապակիները ջարդելու, կայանաձև մեքենաները վնասելու և այլն:

Նկարագրված իրավիճակը, ըստ էության, դժվար է հանցագործության պրովոկացիա համարել, թեև ձևական առումով առկա է հանցագործության սադ-

³⁶ См. у Радачинский С.Н. Провокация преступления как комплексный институт уголовного права: проблемы теории и практики: автореф. дис. ... д-ра юрид. наук. Н. Новгород, 2011, էջեր 5, 13–14:

րում: Սակայն այս իրավիճակն ունի տարբերակիչ առանձնահատկություն. օպերատիվ աշխատակիցը գործ է ունեցել այնպիսի անձանց հետ, որոնք արդեն իսկ վճռականորեն որոշել էին հանցանք կատարել: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է թույլատրելի ճանաչել հանցագործություն նախապատրաստող կամ կատարող անձանց իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելը:

Կարծում ենք՝ նմանատիպ դեպքերը պետք է հստակորեն կարգավորվեն քրեական օրենսդրությամբ: Ուստի առաջարկում ենք այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի³⁷ հաշվառմամբ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը» վերտառությամբ 41-րդ հոդվածում ամրագրել նորմ հետևյալ բովանդակությամբ. «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարման սադրելով»:

IV. Եզրակացություն

Սույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. Հանցագործության պրովոկացիայի քրեաիրավական արգելքը պետք է ներառի տվյալ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները, այլ կերպ՝ լինի՝ հնարավորինս ունիվերսալ և ներառական, հետևաբար օրենսդրի մոտեցումը՝ միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն նախատեսելու մասով, արդարացված չէ և վերափոխման կարիք ունի: Ուստի Քրեական օրենսգրքի՝ կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմը (հոդված 477), կարծում ենք, պետք է էապես խմբագրվի և պատասխանատվություն նախատեսի առհասարակ հանցագործության պրովոկացիայի համար: Առաջարկվող հանցակազմը պետք է ունենա

³⁷ Սույն հոդվածի ուսումնասիրության առարկայից դուրս է այլ պետությունների՝ հանցագործության պրովոկացիային վերաբերող կարգավորումների և պրակտիկայի հետազոտումը, քանի որ այն իրավահամամատական վերլուծության բավականին լայն թեմա է, որին մենք անդրադառնալու ենք հաջորդիվ: Պարզապես նշենք, որ հանցագործության պրովոկացիան քրեորեն արգելված է մայրցամաքային իրավական համակարգի, ինչպես նաև անգլոսաքսոնական իրավական համակարգի մի շարք երկրներում, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

ներառական բնույթ՝ պատասխանատվություն նախատեսելով ցանկացած տեսակի հանցագործության պրովոկացիայի համար՝ ի տարբերություն ֆրագմենտալ բնույթ ունեցող գործող հանցակազմի:

Հոդվածի շրջանակներում չհավակնելով բացահայտելու «հանցագործության պրովոկացիա» երևույթի ողջ քրեաիրավական էությունը՝ պարզապես նշենք, որ տեսական մակարդակում քննարկյա առարկա պետք է դառնան հանցագործության պրովոկացիայի և հանցակցության տարաջատման չափանիշները, ինչպես նաև պրովոկատորի և պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականները:

2. Արժևորելով իրավաչափ պրովոկացիան՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարիմնների հետ համագործակցելը» վերտառությամբ 41-րդ հոդվածում ամրագրել նորմ հետևյալ բովանդակությամբ. «Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարման սադրելով»:

ГАГИК КАЗИНЯН, ГЕВОРГ БАРСЕГЯН – Отделение законных оперативно-розыскных мероприятий от провокации преступления: стандарты, установленные европейским судом по правам человека. – Цель данной статьи - представить аргументированное предложение о криминализации провокации преступления в результате детального изучения и систематического изложения критериев, установленных Европейским судом по правам человека, с учётом идеи правомерной провокации преступления и её особенностей.

Для достижения поставленной цели в статье анализируются критерии, установленные Европейским судом по правам человека по результатам рассмотрения поданных в суд заявлений о законности и правомерности данных, полученных в ходе оперативно-розыскной деятельности. Эти критерии позволяют отграничить законные оперативно-розыскные мероприятия от провокации преступления. Исходя из содержания этих критериев, они условно классифицированы в определённых группах.

В результате проведённого в статье исследования предлагается комплексно (всесторонне) криминализировать провокацию преступления, учитывая успешную практику других стран и международно признанную практику. В то же время, придавая важность правомерной провокации, предлагается установить уголовно-правовую норму, рассматривающую её как обстоятельство, исключающее уголовную ответственность.

Ключевые слова: *оперативно-розыскное мероприятие, законность оперативно-розыскного мероприятия, провокация преступления, полицейская ловушка, правомерная провокация, Европейский суд по правам человека, Европейская конвенция по правам человека, уголовный кодекс*

GAGIK GHAZINIAN, GEVORG BARSEGHIAN – *Separation of Lawful Operational-Search Measures From Provocation of a Crime: Standards Established by the European Court of Human Rights.* – The aim of this article is to present a reasoned proposal for the criminalization of provocation of a crime as a result of a detailed study and systematic presentation of the criteria set by the European Court of Human Rights, taking into account the idea of lawful provocation of a crime and its features.

To achieve this objective, the article analyzes the criteria established by the European Court of Human Rights based on the examination of applications submitted to the Court concerning the legality and lawfulness of data obtained through operational-search activities. These criteria allow for the differentiation of lawful operational-search measures from the provocation of a crime. Based on the content of these criteria, they have been conditionally classified into specific groups. As a result of the research conducted in the article, it is proposed to comprehensively criminalize the provocation of a crime, taking into account the successful practices of other countries and internationally recognized practices. At the same time, valuing lawful provocation, it is suggested to establish a criminal-legal norm that would consider it a circumstance excluding criminal liability.

Key words: *operational-search measure, legality of operational-search measure, provocation of crime, police trap, lawful provocation, European Court of Human Rights, European Convention on Human Rights, Criminal Code*